Պարոն/Տիկին _____ *ին*
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

_____

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

_____

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Մեսրոպյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Մ.Մեսրոպյան _____

«21» 10 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Գործուղվող անձանց անունը, ազգանունը՝

- Սերգեյ Աղինյան,
- Դավիթ Մուրադյան,
- Ելենա Բաբոյան:

2. Զբաղեցրած պաշտոնը՝

- հանձնաժողովի անդամ,
- զարգացման ծրագրերի բաժնի պետ,
- զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ 2025 թվականի հոկտեմբերի 13-16-ը, Թուրքիայի Անկարա քաղաք:

4. Հրավիրող կողմը՝ Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիա (ERRA):

5. Գործուղման նպատակը՝ Ուսումնասիրել ERRA անդամ երկրների փորձը՝ հետագայում Հայաստանում դրանք կիրառելու հնարավորության դիտարկման տեսանկյունից:

6. Քննարկված թեմաները՝ Ինքնավար էներգաարտադրություն և էներգետիկ համայնքներ, գազի սակագնային քաղաքականության խթանումը որպես ապաածխածնացման գործոն, վերականգնվող գազերի և ջրածնի ծագման երաշխիքներ

(GOs), գազի շուկաների գործող իրավիճակը և իրականացված փոփոխությունները, գազի պահեստարանների կարգավորում, էներգետիկ փոխակերպում:

Հոկտեմբերի 13-ին տեղի է ունեցել էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի հիմնադիր անդամների հանդիպում, որին մասնակցել է հանձնաժողովի անդամ Սերգեյ Աղինյանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են մի շարք օրակարգային հարցեր:

Հոկտեմբերի 14-ի հանդիպումը բաղկացած էր 3 մասից: Բացման խոսքով հանդես եկան էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի նախագահ Անդրիանա Նելկովա-Չուչուկը և Թուրքիայի կարգավորող մարմնի ղեկավար Մուստաֆա Յիլմազը:

Հանդիպման առաջին հատվածում քննարկվեցին կոլեկտիվ ինքնավար էներգաարտադրության և էներգետիկ համայնքներին առնչվող հացեր: Հավաքական ինքնավար էներգաարտադրության և էներգետիկ համայնքների մոդելները նոր զարգացում են վերականգնվող էներգիայի ոլորտում: Այս մոդելները նորարարական մոտեցումներ են առաջարկում՝ խթանելու էներգիայի ապակենտրոնացված արտադրությունը՝ միաժամանակ բարձրացնելով քաղաքացիների մասնակցությունը էներգետիկ համակարգերի ձևավորման գործընթացում՝ այդ համակարգերը դարձնելով ավելի ապակենտրոնացված և ավելի ածխածնազերծված:

Հունգարիայի Zero Carbon Hub հետազոտական ընկերության ներկայացուցիը ներկայացրեց զեկույց՝ անհատականն ընդդեմ կոլեկտիվ ինքնավար էներգաարտադրության՝ վերականգնվող էներգիայի դարաշրջանում. հիմնարար հասկացությունները, հիմնական շարժիչ ուժերը և դերերը թեմայով: Այնուհետև Միլանի պոլիտեխնիկի ներկայացուցիչը ներկայացրեց Եվրոպական Միության օրենսդրությունը ինքնավար էներգաարտադրության և էներգետիկ համայնքների վերաբերյալ: Եվրոպական միությունում գոյություն ունեն կոնկրետ կանոններ և ուղեցույցներ, որոնք խթանում են հավաքական ինքնավար էներգաարտադրությունը և նոր դերակատարների, օրինակ՝ վերականգնվող էներգիայի համայնքների ստեղծումը:

Հունգարիայի Zero Carbon Hub հետազոտական ընկերության մեկ այլ ներկայացուցիչ ներկայացրեց տեղական ցանցերի հզորացման թեմայով զեկույց, մասնավորապես ինչպես կարող են էներգետիկ համայնքները նպաստել փոփոխական վերականգնվող էներգիայի ինտեգրմանը:

Հանդիպման երկրորդ հատվածը նվիրված էր առանձին երկրների փորձի ուսումնասիրությանը: Իրենց երկրներում առկա իրավիճակը ներկայացրեցին Ավստրիայի, Հայաստանի, Չեխիայի, Հունաստանի և Թուրքիայի ներկայացուցիչները:

Հայաստանում առկա իրավիճակի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ հանձնաժողովի անդամ Սերգեյ Աղինյանը:

Հանդիպման երրորդ հատվածում քննարկվեցին համայնքահեն ծրագրերի փորձառությունները, որոնք ուղղված են էլեկտրաէներգիայի մատչելիության և հասանելիության ապահովմանը, մասնավորապես, Գանայի ներկայացուցիչը խոսեց կայուն մինի ցանցերի միջոցով էլեկտրաէներգիայի հասանելիության բարձրացման վերաբերյալ: Տանզանիայի և Նիգերիայի ներկայացուցիչները խոսեցին իրենց երկրներում մինի ցանցերի կարգավորման առկա փորձի մասին, որն ուղղված է առավելապես էլեկտրաէներգիայի հասանելիության ընդլայնմանը՝ դոնորների աջակցությամբ գործող մինի-ցանցերի ծրագրերով:

Առցանց ելույթ ունեցավ նաև ԱՄՆ-ի ներկայացուցիչը՝ ցածր եկամուտ ունեցողների համար նախատեսված ծրագրեր՝ «համայնքային արևային էներգիա» ԱՄՆ-ում թեմայով: Ներկայացված մոդելները լուծումներ են առաջարկում՝ ցածր եկամուտ ունեցող կամ սոցիալապես խոցելի սպառողների համար էլեկտրաէներգիայի մատչելիությունը բարելավելու ուղղությամբ:

Հանդիպման վերջում ժամանակ տրամադրվեց հարց ու պատասխանին:
Հոկտեմբերի 15-ի հանդիպումը բաղկացած էր 2 մասից: Բացման խոսքով հանդես եկան Լատվիայի և Լիտվայի կարգավորողների ներկայացուցիչները:

ERRA-ի ներկայացուցիչը ներկայացրեց ԱՄՆ-ում և ԵՄ-ում արհեստական բանականության տվյալների կենտրոնների կարգավորման և քաղաքականության մշակման շրջանակները:

Հաջորդիվ Լատվիայի կարգավորողի ներկայացուցիչը ներկայացրեց զեկույց գազի սակագնային քաղաքականության խթանումը որպես ապաածխածնացման գործոն թեմայով: Կարևորվեցին բիոմեթանի և ջրածնի օգտագործման հնարավորությունները էներգետիկայում:

Լիտվայի ներկայացուցիչը խոսեց վերականգնվող գազերի և ջրածնի ծագման երաշխիքների (GOs) մասին, թե ինչ առավելություններ է GOs-ը տալիս վաճառողներին: Այս

թեմայով իրենց երկրի առկա իրավիճակը ներկայացրին նաև Բելգիայի և Լատվիայի ներկայացուցիչները:

Հանդիպման 2-րդ մասին մասնակիցները բաժանվեցին 2 խմբի և մասնակցեցին կլոր սեղան-քննարկումների:

Առաջին խմբի մեջ ընդգրկված էի զարգացման ծրագրերի բաժնի պետ Դավիթ Մուրադյանը: Քննարկման թեման էր Էներգետիկ փոխակերպումը (Energy transition):

Վրաստանի ներկայացուցիչը խոսեց Վրաստան–Ռումինիա Սևծովյան ստորջրյա մալուխի նախագիծի վերաբերյալ: Այն հանդիսանում է խոշոր էներգետիկ և թվային ենթակառուցվածքային ծրագիր, որը նախատեսում է կապել Վրաստանի և Ռումինիայի էլեկտրաէներգետիկ համակարգերը՝ Սև ծովի հատակով անցնող բարձր լարման մալուխի միջոցով:

Քննարկման յուրաքանչյուր ներկայացուցիչ ներկայացրեց Էներգետիկ փոխակերպման վերաբերյալ իր երկրում առկա իրավիճակը և իրականացված բաերփոխումները: Հայաստանի Հանրապետության առկա իրավիճակը և իրավական փոփոխությունները ներկայացրեց Դավիիթ Մուրադյանը:

Երկրորդ խմբում ընդգրկված էր զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ Ելենա Բաբոյանը: Քննարկման թեման էր գազային վառելիքների շուկաները:

Լատվիայի ներկայացուցիչը խոսեց «Գազային վառելիքների շուկաներ եւ տնտեսական կարգավորում» (GF COM) զեկույցի թարմացումների վերաբերյալ, ջրածնի շուկայի նախագծման, իրագործելիության և մատակարարման շղթայի, ինչպես նաև ջրածնի շուկաներում կարգավորող մարմինների ապագա դերի վերաբերյալ:

Քննարկման յուրաքանչյուր ներկայացուցիչ ներկայացրեց գազամատակարարման ոլորտում իր երկրում առկա իրավիճակը և իրականացված բաերփոխումները: Հայաստանի Հանրապետության առկա իրավիճակը և իրավական փոփոխությունները ներկայացրեց Ելենա Բաբոյանը:

Գազի պահեստարան կայանների կարգավորումների վերաբերյալ ելույթներ ունեցան Լատվիայի և Հունգարիայի ներկայացուցիչները:

7. **Հանդիպումները, ելույթները՝** Հանդիպման շրջանակում հանձնաժողովը նույնպես ներկայացրել է ՀՀ առկա իրավիճակը և իրականացված իրավական փոփոխությունները:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները՝ Հստակեցվեցին հետագա առցանց քննարկումների և հանդիպումների ժամանակացույցը և թեմաները:

Գործուղվող ---------- 21.10.2025թ. ***Ս.Աղինյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 21.10.2025թ. ***Դ. Մուրադյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 21.10.2025թ. ***Ե.Բաբոյան***
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման783-ՀՆ, 28.08.2025թ.**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Սերգեյ Աղինյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Անկարա /Թուրքիա/**

5. Գործուղման ժամկետները **12.10.2025-15.10.2025 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սերգեյ Աղինյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար- հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)		-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	152,102	152.10
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)	140	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	53,554	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	160,663	160.66
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով դոլար)	124	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	47,444	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	189,775	189.78
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար	14,173	14.17
	Այլ ծախսեր (*նկարագրել*)	11,030	11.03
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		527.74	527.74

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 22.10.2025թ.